

Հ. ՀԱՅՐԵԱՆ


ԽՈՐՅՈՒԹԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ



1929

ՊԵՏՀՐԱՑ

ՅԵՐԵՎԱՆ



Հ. ՇԱՔԱՐՅԱՆ

338.Կ:69 (Կ7.925)

ԽՈՐԴՐԴԱՑԻՆ ՀԱՑԱՍՏԱՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ Ե-ԱՄՅԱ ՊԼԱՆԸ

16284
A 4369

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Հ. թ. № 1131

Գրառեպիլար № 2878 (բ)

Տիրաժ 5000

Պետհրատի առաջին տպարտն Վաղարշապատում
Պատվեր № 167

Շինտրարությունը՝ ժողովրդական տնտեսության
հնգամյա պլանում, չափաղանց բացառիկ տեղ և գրա-
վում թե իր բացարձակ և թե հարաբերական իմաս-
տով։

Վորպես տնտեսական գործունելյության մի առան-
ձին տեսակ, շինարարությունն այն առանձնահատկու-
թյունն ունի, վոր թափանցում և տնտեսության բո-
լոր ճյուղերը և նրա հյական մասն ե կազմում։

Ինչ չափով վոր ժողովրդական տնտեսության և
վոչ մի ճյուղ չի կարող իրագործել իր խնդիրներն ա-
ռանց այս կամ այն ծավալով շինարարական աշխա-
տանք կատարելու, այն չափով ել շինարարության
տեսակների հսկալական բազմազանությունը և նրա
ձևերի մանրաբեկոր վիճակը չափաղանց դժվարացնում
են նրա պլանավին ընդգրկումը։

Սակայն ինչպիսի դեֆեկտներ ել լինելին շինա-
րարական պլանավորման մեջ անցած տարիներում,
վորքան ել լիակատար չլիներ նրա հաշվառման ընդ-
դրկումը և այն, այնուամենայնիվ յեղած նլութերը
բավական համոզեցուցիչ կերպով լուսաբանում են
շինարարության դերն ու նշանակությունը՝ մեր ժողո-
վրդական տնտեսության ընդհանուր սիստեմի մեջ։

Այսպես, Հայաստանի Պետպալանի տվյալների հա-
մաձայն, ժողովրդական տնտեսության կապիտալ ներ-
դրումների (հանրացված միջոցներից) և զուտ շինա-

ըարական ծախսի փոխհարաբերությունը հետեւալ ձևով
և պատկերանում (միլիոն ռուբլիներով).

26/27 թ. 27/28 թ. 23/29 թ. 29/30 թ.

1. Կապիտալ

Ներդրումներ	21,4	27,0	36,9	74,2
-------------	------	------	------	------

2. Մախսում-

ներ շինա-

րարության

Վրա	17,1	19,2	27,7	54,2
-----	------	------	------	------

Այս տվյալներից նկատելի է, վոր ամբողջ շի-
նարարության տեսակարար կշիռը կապիտալ ներդրում-
ների ընդհանուր գումարում տատանվում է 70%-ից
մինչև 80%՝ և վորպես հետեւմն մի անգամ ևս
հաստատվում է շինարարության ժողովրդա-տնտե-
սական ահագին նշանակությունը:

Առաջիկա հնգամյակում շինարարության խնդիր-
ները, աչքի առաջ ունենալով ժողովրդական տնտե-
սության համար նկատի տռնված բավական խոչըր
ներդրումները, և ավելի հատուկ նշանակություն են
ստանում, վորովհետեւ բավական և ասել, վոր հնգամ-
յակի ընթացքում ժողովրդական տնտեսության մեջ
շինարարությունը մոտավորապես 72% և կազմում:
Ցեղ յեթե այսոր ժողովրդական տնտեսության վերա-
կառուցման պրոբլեմն և դրվում, ուրեմն, տռաջին
հերթին պետք է առաջ քաշել շինարարության վերա-
կառուցման և նույնիսկ նրա պրոցեսի խնդիրը:

Ընդհանուր գծերով այդպես և շինարարության
նշանակությունն ընդհանրապես և նրա տեղը՝ Հայաս-
տանի ժողովրդական տնտեսության սիստեմի մեջ:

Դառնալով այժմ նույն ինքն շինարարության

պլանին, պետք և նշել, վոր նըա առանձին տեսակ-
ներն անդրազարձել են համապատասխան ճյուղավոր-
ման պլանների վրա. որինակ՝ արդյունաբերական շի-
նարարության, փոխադրության, ելեկտրոշինաբարու-
թյան, գլուղատնտեսության բնագավառում տեղի ու-
նեցող շինարարության վրա և այլն։ Սակայն, շինա-
րարության լերկու տեսակի՝ բնակարանալին և կոմու-
նալի վրա՝ վորոնք այդ պլանների մեջ չեն մտել և
վորոնք իրական շատ մեծ նշանակություն ունեն, ան-
հրաժեշտ և ալսանդ հատկապես կանգ առնել։

ԲՆԱԿԱՐԱՆԱՑԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Շնորհիվ այն պատճառների, վորոնք հաճախ լու-
սարանվել են մեր մամուլում և կարող են հանրա-
ծանոթ համարվել, Հայաստանի ԽՍՀ բնակարանալին
անտեսությունը սուր ճգնաժամ և ապրում։

Դեռ անցյալում, շնորհիվ ինքնակալության վորոշ
քաղաքականության, Հայաստանն իր ամբողջությամբ
ցարիզմի ամենահետամսաց գաղութն եր համարվում
և Անդրկովկասի ամենախուլ տեղերից մեկն եր։

Ուստի և գարմանալի չե, վոր թե ժողովրդա-
կան ամբողջ տնտեսության և թե բնակարանալինի
զարգացման թափը չափազանց թուլլ եր, այն ել տեխ-
նիկական ցած բազալի վրա։

Արդեն իմպերիալիստական պատերազմի մոմեն-
տից մեզնում գրեթե գաղարում և շինարարությունը,
և մասնավորապես՝ բնակարանալին շինարարությունը։
Պատերազմի տարիներում գաղթականների ալիքները,
վորոնք ներխուժեցին Հայաստան, սրեցին բնակա-

բանալին խնդիրը և հաճախ՝ վառելիք և միջոցներ չունենալով, գաղթականները բնակության համար հատկացված շենքերը քանդում ենին։ Տների քանդումի պրոցեսը հետզհետեւ ավելի ու ավելի դարդանում երւ Դաշնակների տիրապետության սկզբից քարուքանդ են լինում քաղաքների թուրքական մասերը, իսկ քաղաքացիական ղատերազմի շրջանում բնտկելի հրապարակը լինթարկվեց ել ավելի վոչնչացման։

Իբրև հետեւանք այդ ամենի՝ Հայաստանի քաղաքներում, մասնավորապես Յերևանում, արդեն 1917 թվականից տճելով աճում է բնակարտնալին ճգնաժամը, վորը քանի գնում, այնքան ավելի սրվում է։

Այդ ճգնաժամն սկսում է անհավատալի արագությամբ աճել տրդեն խորհրդականացումից հետո, յերբ նախկին կայսրության խոլ ծալքամաս լինելուց հայաստանը դառնում է Միության հանրապետություններից մեկը և վերջնիս հետ միասին սկիզբն է դնում ստեղծագործական և խաղաղ շինարարության։

Մասնավորապես Յերևանը՝ լիրկը հասարակական և կուլտուրական կյանքի կենտրոնն ու մայրաքաղաքը դառնալով, վորտեղ կենտրոնացան կառավարական կենտրոնական և հասարակական բոլոր հիմնարկները և ուր Միության բոլոր ծայրերից և նույնիսկ արտասահմանից սկսեցին հոսել բոլոր կուլտուրական ուժերը, սկսեց արտգործն աճել Բավական կլինի ասել, վոր այդ բանի հետեւանքով Յերևանում՝ որինակ, 1926 թվականի մարդահամարով 64,6 հազար հոգի ազգաբնակչություն կար, վորը նախապատերազման ժամանակի համեմատությամբ ավելի քան կրկնապատկել երւ։

Սակայն, բնակարանալին հրապարակի կը ճառումը մեկ կողմից և բնակչության անշեղ տճումը՝ մլուս կողմից, հետզհետե ավելի լին սրում բնակարանալին ճգնաժամը և ուրիշն զայնանալի չե, վոր տարեցտարի բնակարանալին հրապարակի նորման բավական չափով ընկնում ե, հնգամյակի լեթին (27/28թ.) հասնելով 2,74 քառ. մետրի:

Յեթև ներկայումս ԽՍՀՄ քաղաքներում բնակարանալին ճգնաժամի և «քաղցած բնակնորմայի» մասին խոսելիս՝ սովորաբար նկատի ունեն միջին հաշվով ամեն մի հոգուն ընկնող 6 քառ. մետր, մեղնում այդ նորմալին հասնելու մասին՝ նույնիսկ ներկա հնգամյակի ընթացքում, խոսք լինել չի կարող: Այս հանգամանքի վերաբերությամբ չափազանց հետաքըրքի և ԽՍՀՄ մի քանի քաղաքների և հանրապետությունների ամեն մի հոգուն ազահովող բնակնրապարակի նորմաները համեմատության մեջ դնել:

Ամեն մի հոգուն ապահովող նորմաները քառ. մետրով:

1. Լենինգրադ — 8,7
2. Մոսկվա — 5,7
3. Ռիգաինա — 5,8
4. ԱլֆՍՀ — 4,41
5. Վրաստան — 5,49
6. Ադրբեյջան — 3,99
7. Հայաստան — 2,74

(ԱլֆՍՀ, Վրաստանին և Ադրբեյջանին վերաբերյալ տվյալները քաղված են ԱլֆՍՀ Պետպլանի նյութերից, իսկ Հայաստանինը՝ Հայաստանի Պետպլանից):

Այս թվերը մեկնություն չեն պահանջում, բայց

ամբողջությամբ հաստատում են մեր բնակարանալին
ճգնաժամի սրությունը:

Այս բանի հիմունքով, ամենակին կարիք չկա
կանգ առնել այնք շարժառիթների վրա, վորոնք ան-
հրաժեշտություն են թելազրում այս հնգամյակի ըն-
թացքում ամենալուրջ ուշադրությունը դարձնել ժո-
ղովրդական տնտեսության վերակազմության տվյալ
կողմի վրա: Յեվ՛ հասկանալի լե, իրարկե, վոր բնակ-
շինարարության հնգամյա պլանը կազմելիս՝ անհրա-
ժեշտ կլիներ նախազծել այն միջոցները, վորոնք
կկարողանալին կանգնեցնել նախ՝ բնակիրապարակի
պակասումը, և լերկը որդ՝ վորոշ չափով բարձրացնել
ազգաբնակչությանն ապահովող նորման՝ ավելի կամ
պակաս նորմալ սահմաններում: Ուստի, բնակաշինա-
րարության պլանը, ինչպես և ամեն մի պլան՝ ընդ-
հանրապես, պետք է ներկայացնի սիստեմը տնտե-
սական այն միջոցների, վորոնք բղինում են վորոշ
նպատակալին դրությներից՝ մի կողմից և իրական
որդեկտիվ հնարավորությունների հաշվառումից՝ մյուս
կողմից:

Բնակշինարարության հնգամյա պլանը Հայաս-
տանի Պետականը կազմել է յերկու փոփոխակով (վա-
րիանտ), Առաջին փոփոխակը նախատեսում եր հըն-
դամյակի վերջում քաղաքացին ազգաբնակչության
ամեն մի հոգու համար բնակիրապարակի նորման
հասցնել Յ քառ. մետրի: Սակայն, չնայելով այս հա-
մեստ նպատակին, վոր այս փոփոխակն եղնում, այ-
նուամենայնիվ Հայաստանի պարմաններում այդ ավելի
քան ուղարկմալ ե համարվում: Հնգամյակի լերկը որդ
փոփոխակը կազմվել է Փինանսական հնարավորու-
թյունների հաշվառման հիմունքով:

Ակս լերկու փոփոխակները կազմվել են բնակեցված 31 քաղաքատիպ կետերի համար, Յերևան և Լենինական քաղաքների անջատումով, և շինտրաբների ըստ 5 կատիգորիաների, այն ե՝

1. Արդյունաբերական ձեռնարկություններ, վովոնք շինարարություն են կատարում պետքուջելիի, բանկային լերկարատե վարկերի, սեփական միջոցների և բանվորների կենցաղը բարելավելու ֆոնդի հաշվին.

2. Մունիցիպալ ձեռնարկություններ—տեղական բյուջելի, կեր (կենտրոնական կոմունալ Բանկ) և Հայտատանի կոմքանկի փոխատվությունների, ինչպես և հատուկ հատկացումների հաշվին.

3. Բան-բնակարանային կոռպերացիա՝ սեփական միջոցների, կեր վարկերի և հատուկ ֆոնդերի հաշվին.

4. Փոխադրական կազմակերպություններ (լերկաթուղիներ, անրելս հաղորդակցության ճանապարհներ) պետքուջելի և կեր հաշվին և վերջապես,

5. Անհատական շինարարություն՝ սեփական միջոցների հաշվին և Հայտատանի կոմքանկի մասնակի աջակցությամբ:

Պետք են նշել, վոր շինարարության հնգամյա պլանի տարրերը առաջին անգամը՝ չե, վոր մշտակվում ելին մեղնում։ Այսօրես, 1925 թվականից սկսած միքանի անգամ փորձեր են կատարվել Յերևանի բնակչինարարությունը պլանավորելու, հետո՝ Լենինականի լերկաշարժի ժամանակ Լենինականը վերականգնելու պլան և կազմվել և ալլն։

Բայց և այսպես, մինչև 1926 թվականի մարդահամարը այդ բոլոր պլանները թերի ելին. լուսաբանվում, վորովհետեւ նրանք հիմնավորված ելին եքսպերտալին տվյալներով։

Մարդահամարի տվյալներով վելոհիշալ 21 բնակեցված քաղաքային կետերի ամբողջ հաշվառական բնակ-հրապարակը կազմում եր 543862 քառ. մետր, այսինքն ազգաբնակչության ամեն մի հոգուն ընկնում եր 3,43 քառ. մետր:

Յերբ 1926 թվականի մարդահամարի մշակման հետևանքով ստացվեցին այդ թվերը, նրանք՝ վորպես ակներև չափաղանցված թվեր, առաջ բերին այն յենթադրությունը, թե յելտկետային տվյալներում դեֆեկտներ են լեղել: Մինչև այդ ժամանակ, մի ամբողջ շարք հատընտիր հետազոտությունների հիման վրա, թե Պիտոլանը և թե գործկոմները միջին բնակեհրապարակի նորման վորոշելիս յենում ելին շատ ավելի փոքր թվերից: Մարդահամարի թվերի լրացուցիչ վերլուծթյունն այն լեզրակացությանը բերեց, թե նշված տվյալներում իրական բնակարանային հրապարակը չափաղանցված է, վորն առաջ է լեկել նախ՝ այն հանդամանքով, վոր մարդահամարի թվահամարի մեջ մտել են և այն վհչ-բնակելի շենքերը, վորոնք բնակելի յեն դարձել (խոհանոցներ, պաղվալներ, կցաշենքեր, հուղեր և այլն):

Հաշվառքի փորձը և մարդահամարի տվյալների խորը հետաքննությունն այն արդյունքը տվեց, թե ամբողջ հրապարակից անհրաժեշտ ե դուրս քցել մինչև 71 հազար քառ. մետր, վորպես բնակության համար անպետք հրապարակ և այսպիսով ամեն մի հոգուն ընկնող միջին նորման անհրաժեշտ եր իջեցնել և ընդունել 2,70 քառ. մետր: Իդեպ ե ասել, վոր այդպիսի աշխատանք կատարել ե նաև Անդրպետպալանը Անձնական վերաբերմամբ, վորովիետն նույն դեֆեկտները լեղել են նաև Վրաստանում և Աղբբեջանում:

Մասնավորապես Յերևանում այդ նորման ուղղութեարով արտահայտվեց՝ 2,5± քառ. մետրով, փոխանակ՝ 4,62 քառ. մետրի:

Նոր շինարարության հաշվառումով՝ բոլոր կառուցողների գծով 1936—28 թ. թ. ընթացքում, ինչպես և բնակելի հրապարակի մաշվածության հաշվառումով (հանրացված սեկտորի մաշվածությունն ընդունված է 1,25⁰), իսկ մասնավորինը՝ 2,25⁰), հաշվի առնելով նաև Եինինականի բնակեհրապարակի քայլքալում ու վերականգնումը, բնակչությանը 28 թվականի հոկտեմբերի 1-ին, այսինքն հնգամյակի սկզբին, չալաստանի քաղաքներում արտահայտվում է 507,172 քառ. մետրով, փորոնցից հանրացված սեկտորին ընկնում է մինչև 25⁰ և մասնավորին՝ 75⁰, վորը աղբարնակչության ամեն մի հոգուն տալիս և միջին հաշվով 2,74 քառ. մետր:

Այս տվյալների հիման վրա կարելի յե 5-ամյա բնակչինարարության պահանջի հաշվիցը կազմել, բայց այստեղ ամենից առաջ անհրաժեշտ եր հայտարերել քաղաքային աղբարնակչության աճման դինամիկան:

ԿՎ.Վ. (Կենտրոնական Վիճակագրության Վարչություն) տվյալները՝ աղբարնակչության աճման մասին, 1923 թվականից մինչև 1927 թ. ցուց են տալիս, վոր Յերեվան քաղաքի միջին աճումը հավասար է 8,5⁰/0 և աճման ամենամեծ տոկոսը 1925 թվականին է ընկնում՝ 8,8⁰/0, և 1926 թ.՝ 9,5⁰/0. Աւշադրության առնելով, վոր Յերեանի աղբարնակչության այնքան զգալի աճման վրա աղբող պատճառները վոչ միայն չեն վերանա, այլ՝ ընդհակառակն, յերկրի արտադրական ուժերի զարգացման կապակցությամբ և Յերեանի կուլտուրա-

կան դերի աճումով նույնիսկ կուժեղանատն, ուստի առաջիկա հնդամլակի համար հիմքեր չկալին աճման արդ միջին տոկոսն իջեցնել, և այդ պատճառով թերեգանի ազգաբնակչության աճումը պլանավորվող հընդամյակի համար ընդունված է 8,5%։ Ինչ վերաբերում է կենինականին, այստեղ պատկերը մի փոքր այլ կերպ է. այստեղ ազգաբնակչության միջին աճումը, մինչև 1926 թվականը, 5% ից շի անցնում։ Հնդամյակի բոլոր տվյալները վկացում են, վոր իր ազգաբնակչության աճման թափով կենինականը թերեւանից հետ չի մնա։ Կենինականի ազգաբնակչությունը 1927 թ. հունվարի 1-ին կազմված եր 54,857 հոգուց, բայց 1927 թ. հունվարի 1-ի լերկրաշարժից լետո, ուներ 42,313 հոգի, այսինքն ազգաբնակչության արտհուսանքը հավասար եր 22,7% ի։

(Մարդահամարը տեղի ունեցավ յերկրաշարժից լերկու ամիս հետո):

Սակայն, 1929 թ. լրացուցիչ մարդահամարը ցույց տվեց, վոր բնակչության մեծ մասը վերադարձել է։ Իսկ լեթե ազգաբնակչության միայն բնական աճումն ընդունենք 8,7%, հնդամյակի վերջում բնակիչների թիվը քաղաքում կլինի մոտավորապես 63,214։

Ուշադրության առնելով միայն տեքստիլ արդյունաբերության բանվորների թվի աճումը, մոտավորապես մինչև 6,5 հազար (համաձայն հնդամյակի պլանի) և 3-ի հավասար ընտանիքավորության կոեֆիցիենտը, կենինականի քաղաքական ազգաբնակչության թիվը հնդամյակի վերջում կհասնի մոտավորապես 80,000-ի։ Իսկ լեթե վերցնենք աճման այնպիսի տոկոս, ինչպես Յերեւանում (8,5%), ազգաբնակչության ընդհանուրը

քանակը մի փոքր կիջնի՝ 79,433 մարդ և յեթե այս
թիվը մի փոքր մեղանչում ե, համենալին դեպս վոչ մե-
ծացնելու կողմը։

Մյուս քաղաքների ե բնակեցված քաղաքատիպ
կետերի վերաբերությամբ՝ աճման տոկոսը 4 տարվա ըն-
թացքում հավասար ե 4,10/0-ի, իսկ հնդամլակի համար
այդ աճումն ընդունված ե 40/0։

Իսկ ընդհանրապես անհրաժեշտ ե նկատի ունե-
նալ, վոր Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ ազ-
գարնակչության աճման թափը քաղաքներում զգալի
չափով ուժեղացավ։ Այդ բանը տնտեսական և կուլ-
տուրական կարգի պատճառներով ե բացատրվում՝
ժողովրդական տնտեսության արդյունաբերության և
կապիտալ շինարարության զարգացումը գյուղական
ազգաբնակչության համար հնարավորություն և ստեղ-
ծում գործադրել իր բանվորական ազատ ուժերը, և
մյուս կողմից՝ գյուղի կուլտուրական պահանջները,
վորոնց զարթեցըել ե հեղափոխությունը դարավոր
քնաթափությունից, անխուսափելի հակասության մեջ
են գրվում գյուղական կյանքի ամբողջ ձեւերի հետ և
ազգաբնակչության համար խթան են դառնում հոսել
դեպի քաղաքները։ Ճիշտ ե, այս հնդամլակի համար
մի շարք միջոցներ են նախագծվում պակասեցնելու
ալի հոսանքը, բայց և այսպես նշված պայմանները,
վորոնք ազդում են վերջին տարիների ընթացքում,
նույնպես պահպանում են մասամբ իրենց ազդեցու-
թյունը նաև պլանավորվող հնդամլակի վրա։

Վերեօւմ հիշված նկատառումների համաձայն՝
քաղաքալին ազգաբնակչության ընդհանուր քանակը
հնդամլակում ներկայանում ե հետևյալ ձեռվ՝

Հայաստանի ԽՍՀ բաղաբարյան ազգաբնակչությունը՝
հնգամյակում

	1928/29 թ.	29/30 թ.	30/31 թ.	31/32 թ.	32/33 թ.
1. Յերևան	80.913	87.790	95.252	103.348	112.133
2. Լենինա-					
կան . .	52.987	57.491	62.378	67.680	73.433
3. Մյուս					
քաղաք-					
ները . .	67.034	69.715	72.503	75.403	78.419
Ընդամենը	200.934	214.996	230.133	246.431	263.985

Բնակչինաթրարության արժեքի վերաբերությամբ՝ պլանում հաստատուն նպատակ և դրվում շինարարական ինդեքսն իջեցնելու վերաբերյալ դիրքեկտիվն իրադորձել. ԱԽՖՍՀ կառավարության հաստատած նորմաները՝ 1927/28 թ. նկատմամբ, Յերևանի համար նշանակված ելին խոր. մետ. 16 ռուբլի, իսկ մյուս քաղաքների համար՝ 17 ռուբլի: Նշված լիմիտները այն լեկետային մեծություններն են, վորոնց վերաբերությամբ կարելի է ենթադրություններ անել բնակչինարարության միավորի արժեքն իջնցնելու մասին:

Շինարարական ինդեքսի ընդհանուր իջեցումը հանրացրած սեկտորում 1927/28 թ. համեմատությամբ 1932—33 թ. ընդունված և 31% , իսկ մասնավորում՝ $19,2\%$: Բայտ տարիների՝ ամենաշատ իջեցումը տալիս են վերջին յերկու տարիները, վորովհետեւ եփփեկտը

հիմնական պայմանների, վորոնք տանում են դեպի արժեքի իջեցումը—վերադիր ծախսերի կրճատում, արտադրության մեջենացում և ռացիոնալացում, շինամթերքների աժանացում, տեղական շինամթերքների լայն ոգտագործում, բանութերի և տեխնիկազմի վորտակալ կադրերի պատրաստություն, փոխադրության մեջենացում և այլն,—իերեան և գալու հետզհետե ավելի շատ և ավելի լրիվ՝ շինարարության ծավալումի համեմատ:

Ինչ վերաբերում ե մաշվածության, այդպիսին պլանն ընդունել ե $2,25^0/0$ ՝ մասնավոր սեկտորի համար և $1,21^0/0$ —հանրացածվածի համար։ Գալով Հայաստանի բնակչության, այդ նորման պետք ե համարել ցած, վորովհետեւ բնակարանների տեխնիկական դրությունը, ինչպես մենք արդեն ցուց ենք տվել, չտփադանց վատ ե կցաշենքերի մեծամասնության պրիմիտիվ բնույթի գաճառով և՝ բացի դրանից, պետք ե բարույական մաշվածության խնդիր դնել, վորովհետեւ անհրաժեշտ ե քաղաքների (մանավանդ Ցերեանի) պլանավորմանը զուգընթաց, հակասանիտարական, գոմանման ասիտական ծեփածոնները փոխարինել իսկական բնակարաններով։ Սակայն Պետպլանը դիտակցորեն խուսափեց նրա մեծացումից, վորպեսզի չբարձրացնի մեր պահանջի առանց այն ել բարձր թիվը։

Վերեսում բերված բոլոր տվյալների հիմունքով Պետպլանը կազմել ե բնակչինարարության պլանի առաջին փոփոխակը, նպատակ դնելով հնդամլակի վերջում նորման հասցնել 6 քառ. մետրի։ Այսաեղ առանց ալդ բոլոր հաշիվներն առաջ բերելու՝ կտանք միայն ստացված հետեւանքը, թէ հնդամլակում վորպիսի ան-

հրաժեշտ գումարների ներդրում և պահանջվում (հազար ռուբլիներով):

1. Թերեանի համար . . .	54.029,7	48,3%
2. Լենինականի՝ . . .	34.331,7	30,6%
3. Մյուս քաղաքների՝	23.601,6	21,1%

Ընդամենը	111.963,0	100,0%
------------------	-----------	--------

Հստ հնդամլակի տարիների՝ այդ ծախսութերը բաշխվում են (հազար ռուբլիներով):

1928/29 թ. . . .	12.377,9	11,0%
1929/30 թ. . . .	15.148,6	13,5%
1930/31 թ. . . .	19.009,6	17,0%
1931/32 թ. . . .	26.477,0	23,6%
1932/33 թ. . . .	38.949,9	34,9%

Ընդամենը . . .	111.963,0	100,0%
----------------	-----------	--------

Սակայն, այդ պլանի ֆինանսավորման ազգայուր-ներին դառնալով, ստիպված ենք հավաստել, վոր նրա իրագործման վրա պետք ե դնել մինչև 112 միլիոն։ Ահա թե ինչու ցուցի տալով պլանի ֆինանսավես վոչ ոեալ լինելը, Հայաստանի Պետպլանն ստիպված լեզով հրաժարվել բնակարանային հրապարակի նորմաները հնդամյակի վերջում 6 քառ. մետրի հասցնելու դրույթից և ընդունել, վոր մեր պայմաններում տուաջադրուված դրույթն անիրագործելի լին Յեվ այսպես, ընակշենարարության պլանի տուաջին՝ ավելի քան ոպտիմալ փոփոխակը Պետպլանն ինքը ստիպվեց հենց այստեղ տեղումը մերժել և կտպմել՝ ինչպես ասված ե վերեւում, յերկրորդ փոխոխակը, այս անդամ արդեն վոչ թե պահանջը նկատի տունելով, ապէ այն Փինանսական հնա-

բավորությունները, վոր կարող են գրավվել և բնակչինարարության վետ դրվել

Այդ տեսանկյունով պլանը կազմելիս՝ անհրաժեշտ եր ըստ երության կազմել ֆինանսական պլանները կառուցողների առանձին կատեգորիաների գծով:

Արդյունաբերության հնդամյա պլանի տվյալներով՝ բնակչինարարության ընդհանուր ծավալը 12,5 միլ. ոռորվի է։ Հայաստանի արդյունաբերությունը, սակայն բացառությամբ սկսել և հիմնավորվել և գարգանալ մեղնում միայն լերկը խորհրդայնացումից սկսած, և ուստի արդյունաբերության մեջ կապիտալ ներդրումներ մտցնելու հետ միասին, ընդհանրապես պետք են ուղղված ուղաղրություն դարձնել նաև արդշինարարության վրա։ Ուստի, լեթե հաշվի առնենք արդյունաբերության ծավալումը, մի շարք նոր ճյուղեր ստեղծելը, զրադիմ բանումի անումը և ալին, այդ ծախսումներն անհրաժեշտորեն պետք են նվազագույնն ընդունել։ Այդ գումարից իրեն՝ արդյունաբերության սեփական միջոցներին վերապահվում են 4,5 միլ. ոռորվի, բանվորական կենցաղը բարելավելու ֆոնդին և պետրութիւնին 1-ական միլ. ոռորվի, և Կեթ վարկին՝ 6 միլ. ոռորվի։ Այդ ներդրումները թույլ կտան բանվորների բնակարանային հրապարակի նորման միջին հաշվով 3 քառ. մետրից բարձրացնել (լեթե տաղավարատիպ հանրակացարանները չհաշվենք) և հասցնել մուտավորապես 5 քառ. մետրի։

Գործկոմի միջոցները, վորոնք ըստ որենքի բնակարանային շինարարության վրա լեն դրվում, բացի տեղական բյուջեից, կազմվում են նույնպես առևտրաբարյունաբերական շինքելի վայրագնի 50% մասնա-

տրումներից և 100% մունիցիպալ ֆոնդից։ Այս միջոցներն՝ իրեն ֆոնդեր մտնում են տեղական բյուջեին մեջ և քնակշինարարություն կատարելու հատուկ նշանակություն ունեն։ Պլանում գործկոմական շինարարության և վերապահվում նույնպես վարչության շինարարությունը, ուստի և կառուցողների այդ կառեգորիան իր ամբողջությամբ պլանումն անվանվում է մունիցիպալ շինարարություն։ Կառուցողների այս կատեգորիայի գծով տարվող բոլոր հատկացումների գինամիկան թույլ ե տալիս՝ մի շաբաթ համապատասխան հաշվանքներից հետո, շինարարության ընդհանուր ծավալը հասցնել 19 միլ. ռուբլու, վորի մեջ տեղական բյուջեով 6 միլիոն ռուբլի և կերպով միջին վարկելը՝ 13 միլ. ռուբլի։

Բոլորովին ուրիշ տիպի կառուցող և հանդիսաբնակ-շինարարական կոոպերացիան։ Բնակ-շինարարական կոոպերացիայի դրական հատկանիշն են ներգրավել ազգայնակազության սեփական միջոցները և ստացվող փոխարինությունները վերադարձնելու բնույթը։ Թեև բնակարանային կոոպերացիան Հայաստանում առաջ ե լեկել 1926/27 թ., սակայն ելի կարողացել ե կարճ ժամանակում աշխատանքն ուղիղ և ամուր հիմքերի վրա դնել և ընդհանրապես շատ մեծ աշխատանք ե կատարել՝ թե անդամներ ներգրավելու և թե շինարարության իմաստով։ Բնակ-կոոպերացիայի անդամների աճման, բաժնետիրական մուծումների, թերթ, պետրուջելի միջոցների և կերպով վարկերի հիմունքով՝ կոոպերատիվ ընակշինարարության ծավալը հնգամակում վորոշված ե 4 միլ. ռուբ., այդ թվի մեջ կերպով ընկնում ե 2,5 միլ. ռուբ., պետրուջելին՝ 1 միլ. ռուբ. և սեփական միջոցներին և թերթ՝ 0,5 միլ. ռուբլի։

Փոխազրական ընակշինաբարության գծով նկատի ցե առնված, դլխավորապես, լիրկաթուղարին տնտեսության բանվորական շինարարությունը, մասամբ անքելս փոխազրության բանվորների աների կառուցումը; ինչպես և կառուցումները՝ Աւանում: Մասսունիքի ընդհանուր ծավալը 2 միլ. ոռոքի լի, վորը կազմվում է կեր 1,5 միլ. ոռոքի վարկերից և պետքուժելի 0,5 միլ. ոռոքի հատկացումներից:

Վերջապես, վերջին, անհատական կառուցողը նույնպես անդրադարձել է պլանում ավելի կամ պակաս բավարար առտիճանով: Ճիշտ ե, իր ընուլթով այնուամենալիք նա մնում է վորպես մանր կառուցող: Առանց նկատի առնելու սանիտարական պարմանները և տեխնիկական նորմաները, անհատական կառուցողն ամենաաժան նյութերից ե տներ շինում, ընակարանին աւարական հարմարություններ չի մատակարարում և հետևանքն այն է լինում, վոր աժան տիպի վատ տներ են ստացվում: Սակայն, չնայելով այս բացասական կողմերին, այս հնգամյակի ընթացքում կարիք չի լինի հրաժարվել նրանից, ինչ չափով վոր նա մասնակի լուծում և ընակարանալին ճգնաժամը: Ընդհակառակին՝ այստեղ չափազանց կարենոր և նպատկահարմար ուղղություն տալ անհատական շինարարությանը պլանալին հունով, վորով կառուցվող հրապարակի վորակը վորոշ չափով կրաքանար և ընակարանալին ճգնաժամը մի փոքր կմեղմանար:

Այստեղ Հայաստանի կոմբանկը պետք է ոգնության գտ, իր միջոցները բանվոր և ծառայող անհատական կառուցողներին ուղղելով: Հնգամյակի ընթացքում ներդրումների ծավալն այդ կատեգորիալի

ամբողջ գծով վորոշված և 2,5 միլ. ո., վորի մեջ՝ կոմքանկի հաշվին 0,5 միլ. ո. և սնվական միջոցների՝ 2. միլ. սուբլի:

Ի հետեւումն բոլոր ասվածների, բնակչինարաբության մեջ մտնող կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալը բոլոր կառուցողների և աղբյուրների գծով հնդամյակի ընթացքում բաշխվում և հետեւալ ձեռք (միլիոն սուբլիներով) .

ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐ	ՀՆԴԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՍՄԸ ՆԵՐԴՐՈՒՄ ԸՆ- ԴԱՄԲՆԵՐ	ՆՈՒԹՆ ԲԱԼԻ ՄԵՋ					
		ՏԵՂԲՈՒԴ.	ՊԵՐԵՐՈՒԴ.	ԿԵՐ	ՀԱՐԺՈՒՄ՝ ԸՆԴՀԱՆԻ	ՄԱՓՀԵՂԸ	ԲԵՐ
Մունիցիպալէն.	19,0	6,0	—	13,0	—	—	—
Արդյունաք. շին.	12,5	—	1,0	6,0	—	4,5	1,0
Կոռպերատ. շին.	4,0	—	1,0	2,5	—	0,5	—
Փոխադրող. շին.	2,0	—	1,5	0,5	—	—	—
Անհատակ. շին.	2,5	—	—	—	0,5	2,0	—
ԸՆԴԱՄԲՆԵՐ	40,0	6,0	3,5	22,0	0,5	7,0	1,0

Առաջ բերված տվյալներից նկատելի է, վոր Հայաստանի բնակչինարաբության ներդրումների ընդհանուր ծավալը հնդամյակի ընթացքում 40 միլիոն սուբլի է, ընդ վորում բոլոր ներդրումների հանրագումարում ամենամեծ տոկոսն ընկնում և մունիցիպալ շինարարությանը՝ $47,5\%$, ապա արդյունաբերականին՝ $31,2\%$, կոռպերատիվին՝ $10,0\%$, փոխադրականին՝ 5% և անհատական շինարարությանը՝ $6,3\%$.

Պլանը ծածկող շատ խոշոր աղբյուրն են, ինչ-

աղես լեռնում և աղլուսակից, Կեր վարկերը, վորոնք բոլոր ներդրումների 55 % են կազմում, հետո գալիս են կառուցողների սեփական միջոցները՝ 17,5, ապա՝ տեղական բյուջեն՝ 15 % և այլն:

Այժմ հետաքրքիր են բաղդատել այդ ներդրումները հաշվետվական տվյալների, հնգամյակի առաջին տարվա հատվածի կատարման և 1929/30 թ. ստուգիչ թվերի հետ:

Այսպես, ըստ Հայպետպլանի՝ նյութերի՝ մենք ընտեղինարարությանը հատկացված ներդրումների հետեւալ պատկերը կստանանք (միլ. ռուբլին):

ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐ	1927/28 թ.	28/29 թ.		29/30 թ.	
		ՀԱՅ	ՀԱՅ ՎԱՐ	ՀԱՅ	ՀԱՅ ՎԱՐ
Մունիցիպալ շինարար	1,5	2,8	1,7	2,9	3,4
Աշխատավայր	2	1,8	1,9	2,4	2,4
Կոոպերատ.	2	0,8	1,3	0,6	1,7
Փախողը.	2	0,2	0,3	0,3	0,4
Անհատակ.	2	0,3	0,2	0,2	0,5
Ընդամենը	41	6.0	4.1	7.7	8.4

(27/28 թ. Լենինականի վերականգնման վրա գըր՝ ված ծախսումները ցույց չեն տրված, վորը 5,1 միլ. ռուբլի չե):

Ինչպես ցույց են տալիս աղլուսակը, հնգամյակի 1928/29 թվականի պլանային լենթադրությունը մեզնում չի կատարվել միջին հաշվով 33 % ով, մասնա-

վորտապես՝ առանձին կառուցողների գծով բավական շատ թերառք ունի մունիցիպալ շինարարությունը (27%), արդյունաբերականը (30%) և հատկապես կոսկերատիվը, վորտեղ պլանի թերակատարությունը հավասար և 58% (տոկոսները կլորացված են). Այդ զգալի շեղումը բացատրվում է նրանով, վոր մի քանի ազգայուրներից միջոցները թերի չեն ստացվել՝ պլանը ծածկելու համար։ Այսպես, ըստ տեղական բլուժեցի չենթադրվում եր պլանով 900 հ. ուռելի դնել, իսկ փաստական չենթադրություններով ներդրումները կազմում են միայն 75% . Ըստ ԱՄֆեշ բլուժեցի՝ թերառքը հասնում է 40% , իսկ պլանի թերակատարման վրա հատկապես անդրադարձել և կերպ վարկերի կըրճատումը, այն և պլանով նախագծված ± 720 հ. ու փոխարեն, ունենք 1545 հ. ո., ալսինքն ալդ գումարի $41,5\%$.

Այս ասածից յեխելով, $1929/30$ թ. բնակչինաբարության վերաբերյալ ստուգիչ թվերի նախադիմը կազմելիս՝ Պետպլանն ստիպված յեղալի ներդրումները մի փոքր ուժեղացնող նախագիծ կազմել պլանով ընդունված հատվածի հանդեպ, վորպեսզի դրանով մասմբ լրացնի հնդամակի առաջին տարվա թերառքը և հնարավոր գարձնի հնդամակի լրիվ կատարումը։

Աղյուսակից նկատվում են, վոր $1929/30$ թվականի համար ալդ մեծացումը աչքի առաջ ունի մունիցիպալ և անհատական շինարարությունը և իր ամբողջությամբ կազմում է մոտ 9% , Եղ ավելի մեծացում՝ չնայելով $1928/29$ թվականի պլանի թերակատարմանը, հնարավոր չեր անել մի շարք ֆինանսական նկատառումներով, ուստի և պետք է լրացնել և

հաշվի առնել ալդ՝ հնդամշակի հետագա տարիներում։
Կոորդինալ և միաժամանակ հետաքրքիր և մեր
քաղաքների բնակչունդի դինամիկայի և նրա բաշխ-
ման խնդիրն՝ ըստ սեկտորների։ Ալդ պրոբլեմի պար-
զաբանությունը հնարավորություն կտա մեզ ըմբռնել
հիմնական բնակչունդի դինամիկան, պարզել հանրաց-
ված և մասնավոր սեկտորի մասնակցությունն ալդ
ֆունդին։ Սակայն, գործնականում տշխատանքների
պլրոցեսում մի շարք դժվարությունների դեմ առնե-
լու հարկ լիզավ, զորովինեաւ ավելի կամ ամուր լիլա-
կետալին տվյալներ չկային։ Ահա թե ինչու ներքեսու-
մը ըերգող թվերը մի փոքր մոտավոր թվեր են։ Այս-
պիս, թե այնպես, հիմնական բնակչունդի դինամիկան
հետեւալ պատկերն ունի (քառ. մետրերով, կենինա-
կանի հրապարակի վերականգնումն ել հաշվի առնե-
լով)։ (Աղյուսակը տես եջ 24)։

Այս աղյուսակից լիրեկում ե, վոր հիմնական բնակ-
չունդի դինամիկան ամբողջ հնդամշակում մեծանում ե
և 1932/33 թ. վերջում նրան ընդհանուր աճումը հավա-
սար և, 1927/28 թ. համեմատությամբ, 64,6 %։ Ա-
ռանձնապես ուժեղ տնում և ցուց տալիս հանրացված
սեկտորը, մոտավորապես նույն ժամանակաշրջանում
մեծացումը հավասար և 296,5 %։ Իսկ մասնավոր սեկ-
տորը մեծանում և միայն 3 %։ Այլս, նշված ներ-
գրութիւնների հետևանքով հնդամշակի ընթացքում ըն-
դամենը նոր բնակերապարակ կկառուցվի մինչև 384,5
հազ. քառ. մետր, և ալդ թվից հանրացված սեկտորը
նոր բնակերապարակ կտա 345,4 հազար քառ. մետր,
իսկ մասնավորը մնացածը—39,1 հազ. քառ. մետր։
Մրան զուգընթաց բնակերապարակի մաշվածությունը

	27/28	ՀՆԳԱՄՑԱԿ	
	F.	28/29 F.	32/33 F.
I. Կանխիկ Ֆանդ			
ա. հանրացված սեկտոր	126.235	161.564	376.470
բ. մասնավոր »	347.559	345.608	349.956
Ընդամենը .	473.794	507.172	726.426
II. Տարփա Մաւլանձուք.			
ա. հանրացված սեկտոր	1.577	2.019	4.706
բ. մասնավոր »	6.951	6.912	7.874
Ընդամենը .	8.528	8.931	12.580
III. Նոր կառուց. Բրապար.			
ա. հանրացված սեկտոր	36.906	26.053	107.200
բ. մասնավոր »	5.000	2.660	13.310
Ընդամենը .	41.906	28.713	120.510
IV Բնակֆ. նետեվ. տար. սկզ.			
ա. հանրացած սեկտոր	161.564	185.598	478.964
բ. մասնավոր »	345.608	341.356	355.392
Ընդամենը .	507.172	526.954	834.356

հնգամյակում լերկու սեկտորի գծով կկազմի 45,5 հ.
քառ. մետր, սակայն, ինչպես վոր պետք եր սպասել,
ալդ մաշվածության մեջ մասնավոր սեկտորի տեսակա-
բար կշնոր մեծ տեղ ե բռնում:

Այլևս հետաքրքիր ե նշել, վոր լեթե 1926/27
թվականին քաղաքացին ամբողջ բնակնրապարակի
միայն 25 % եր հանրացված, հնգամյակի տարինե-
րում անշեղորեն բարձրանալով՝ 1932/33 թ. արդեն
հանրացված սեկտորը ամբողջ բնակչության գումարի
51,7% ե բռնում:

Դրանից հետո հետաքրքիր և Հայաստանի քա-
ղաքների բնակչությի հիմնական կապիտալի դինամի-
կան բերել հնգամյակի ընթացքում, սեկտորների բաշ-
խումով և անցած տարիների համեմատությամբ (հա-
զար ոռուրիներով, ներառյալ և Հենինականի վերա-
կանգնման ծախսումները). (Աղյուսակը տես եջ 26):

Բնակչությի հիմնական կապիտալի դինամիկան,
ինչպես լերեւում և աղյուսակից, ցուց և տալիս ան-
շեղորեն աճում և հնգամյակի վերջում 1927/28 թ.
հանգեց մեծանում և 89% -ով, ընդումին մասնավոր
սեկտորում ունենք գրեթե կայուն դրություն, իսկ ալդ
աճումը կատարվում և բացառապես հանրացված սեկ-
տորի հիմնական կապիտալի մեծանալու հաշվին: Յեվ
զարմանալի էի չե, վոր տարեց-տարի մասնավոր սեկ-
տորի տեսակաբար կշռի անկման տեսնդենց և նկատ-
վում: Այսպես, լեթե 1926/27 թ. բնակչությի ամբողջ
հիմնական կապիտալի հանրագումարում մասնավոր
սեկտորը 52% եր, 1932/33 թ. վերջերում նրա տեսա-
կաբար կշռի իջեցումը կհասնի մինչև 24% -ի:

Այս բոլոր ասածներից լերեւում ե, վոր բնակչու-

	<i>27/28</i> <i>Բ.</i>	<i>ՀՆԴԱՄՑԱԿ</i>	
	<i>28/29Բ.</i>	<i>32/33Բ.</i>	
I. Կանխ. Ֆոնդ տարվ. սկզ.			
ա. հանրացված սեկտոր	17.140,8	22.783,1	51.640,0
բ. մասնավոր »	18.966,9	18.987,6	18.570,0
Ընդամենը .	36.107,2	41.770,7	70.210,0
II. Մասվածություն տար. ընթացկում			
ա. հանրացված սեկտոր.	214,3	284,8	645,5
բ. մասնավոր »	379,3	379,8	484,8
Ընդամենը .	593,6	664,6	1.129,8
III. Կապիս. Ենրք. տար. ընթ.			
ա. հանրացված սեկտոր.	5.857,1	8.908,4	9.650,0
բ. մասնավոր »	400,0	200,0	850,0
Ընդամենը .	6.257,1	4.108,4	10.500,0
IV Հիմն. կապիս. տար. վերջ.			
ա. հանրացված սեկտոր.	22.783,1	26.406,7	60.641,5
բ. մասնավոր »	18.987,6	18.807,8	18.935,7
Ընդամենը .	41.770,7	45.214,5	78.580,2

նարարության հնդամյա պլանում, ինչպես հիմնական բնակչության, այնպես ել հիմնական կապիտալի զինտմիկայի, մեջ անշեղորեն ուժեղանում և հանրացված սեկտորի գերը մեր քաղաքների բնակարանալին ընդհանուր տնտեսության մեջ:

Այդպիսի նախագծմանը զուղընթաց, բնականարար աղքարնակչության ամեն մի հոգուն բնակերապարակով ապահովող միջին նորման պետք և ավելանա, բայց նախատեսնված 6,2 մետրի նորմայով, վորովիետե՛ ինչպես ասված և վերեռում, այդ փոփոխակի իրավործումից՝ ֆինանսական նկատառումներով, հարկ չեղավ հրաժարվել:

Իր ամբողջությամբ քաղաքային աղքարնակչության ամեն մի հոգուն բնակերապարակի միջին չափով ապահովելու դինամիկան հետեւյալ պատկերն ետալիս (մետրերով).

1926/27 թ. 27/28 թ. 28/29 թ. 32/33 թ.

2,70 2,74 2,69 3,17

Այստեղ 1928/29 թ. իջեցումը՝ 1827/28 թ. հանդեպ, բացատրվում և պլանի թերակատարությամբ (վորի մասին վերեռում ասված ե), բայց պետք և անհրաժեշտորեն ընդունել, վոր հնդամյակի համար նախադված ամեն մի հոգուն բնակերապարակով ապահովելու անումն ընդհանրապես աննշան ե. այս ասածը մի անդամ ևս հաստատում ե, վոր մեր քաղաքների աղքարնակչության աճումը շատ ավելի բարձր և բնակչինարարության ներդրումներից և տրդ պատճառուվ ել այս հնդամյակի ընթացքում բնակարանային ճգնաժամամբ սուր կերպով կղզացվի:

Սակայն, այդ ճգնաժամը մեղմելու ուղղությամբ

արդեն կառավարությունը համապատասխան միջոցներ ե ձեռք առել Հաշվի առնելով, վոր սովորական կարգով անհնարին և կանոնավորել և մեղմել բնուկարանային ճգնաժամը, մանավանդ Յերևանում, և մյուս կողմից, անհրաժեշտ համարելով մի փոքր ձիգ տալ Յերևանի նորմաները հնգամյակի վերջերում մինչև ԱՄՖԻՀ և ԽՄԽՀ ալլ քաղաքների նորմաները, Հայստանի կառավարությունը համապատասխան որդաններում արդեն խնդիր ե զրել Յերևանի բնակչունարարությանը արտակարգ նշանակություն տալ Ալժմ, յերբ մեր առջև ըռլոր հնգամյա պլանների վերակաղմության խնդիրն ե դրված, յերբ մեր բարձրագույն որդանները և Անդրաբետպանը անհրաժեշտ համարեցին արտակարգ միջոցներ ձեռք առնել մեր բնակարանային ճգնաժամը վերացնելու, մեզ թվում և, թե բնակչինարարության նորից վերակազմվող պլանում անհրաժեշտ ե հաշմի առնել մի փոքր ավելի լայն հեռանկարներ մեր բնակարանային ճգնաժամն ավելի նորմալ կերպով զուրս մղելու համար։ Համենայն դեպս տվյալներն ասում են, վոր բնակչինարարության պլանը մեզնում կփոփոխվի բարձրացման ուղղությամբ։

Խոսելով քաղաքներում ամեն մի հոգուն միջին նորմացով ապահովելու մասին, հետաքրքիր կլիներ Յերևանի նկատմամբ միջին նորման առանձին տալ։

Հնգամյա պլանի տվյալներն այդ դինամիկան տալիս են հետևյալ ձևով. 1927/28 թ. Յերևանի ամեն մի հոգու նորման հավասար ե 2,42 քառ. մետրի, իսկ հնգամյակի վերջում կհասնի 3,12 քառ. մետրի։

Կարիք չկա այստեղ մի անգամ ել դառնալ այն շարժառիթներին, վորոնք բնակչինարարության պլա-

նի վերակաղմության անհրաժեշտությունն են թելապրում։

Այսպիսի, վոչ լեռբեք փալլուն հեռանկարների տանչությամբ, ծառանում և նախ՝ միջոցները հնարավոր մեծ չափով մորիլիզացիալի լենթարկելու խնդիրը։ Տեղական բլուջելի մասնակցությունը բնակչինարարության չափերում և մասնավոր կապիտալի ներգրավումը հնարավոր կդառնա միայն բնակարանավարձի հետագա աճման պայմանով։ Բնակարանային տնտեսության շահը պահանջում և լիովին իրագործել բնակելիքի ֆոնդի «ինքն իր ծախքը ծածկելու» սկզբունքը, մինչդեռ գորություն ունեցող բնակարանավարձը չափազանց ցածր և պետք և բարձրացնել միջին բնակարանավարձի բարձրացումը՝ քառ. մետրին 23 կոպեկից 40 կոպեկի հասցնելը, վոր նկատի յեւ առնված պլանում, անհրաժեշտ և իրագործել ինչ ել վոր լինի։

Ընդհանուր գծերով ալդ և բնակչինարարության ոլլանի հիմնական ձևերի պատկերը։

Թվերը արենախոս են և միայն մի հետևություն կարող ե լինել—հնդամյակի լեռկրորդ փոփոխակը, վոր կառուցված և գինանական հնարավորությունների ավելի իրական հաշվառման վրա, ծրագրի նվազագույնն ե, վորի կենսագործումը պետք և ապահովիլի ինչ ել վոր լինի. նշված պլանային լենթաղրությունների ամեն մի թերակատարումը հղի յեւ հետագա և զդալի խորացման վտանգով բնակարանային տանց այն ել այն սուր ճգնաժամի, վորն ապրում և չայստանը, մանավանդ նրա լեռկու կենտրոնը— թերեանը և լենինականը։

Ահա թե ինչու լեղբակացության մեջ անհրաժեշտ

ե նշել, վոր բնակշինարարության պլանի իրացումը պահանջում է բավական մեծ չափով ֆինանսական լարում, տեխնիկական, կտզմակերպչական բարդ սիստեմի և նորմատիվ միջոցների իրագործում՝ բնակշինարարության նյութական ապահովության բնագավառում և նրա ձեերի տեխնիկական վերակաղմության բնագավառում։ Այս խնդիրը պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն վճռ միայն պլանալին և շինարարական որգանները, այլ և խորհրդալին ամբողջ հասարակախությունը։

ԿՈՄՈՒՆԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Անցնելով կոմունալ շինարարության, անհրաժեշտ և նշել, վոր մեզնում այդ ճյուղը համեմատաբար թույլ և զարգացած լեղել. Նախահեղափոխական ժամանակ զիմստվոների բացակայությունը՝ թե Ա.Ս.Ֆեռն, և թե Հայտատանում, տեղական հասարակական ինքնազործունելության թույլ զարգացումը արգելք ելին դնում կոմունալ տնտեսության զարգացման առաջ։ Ուստի այժմյան Հայաստանի տեղրիտորիալում, Յերևանի ջրմուղի բացառությամբ, մենք չենք տեսնում վորեւ և ուշադրության արժանի կոմունալ ձեռնարկություն։

Այս ասածների հետևանքով՝ մեր ավելի կամ ողակաս խոշոր բոլոր կենտրոններում, ինչպիսիք են Յերևանը, Լենինականը, Ղարաբաղի իսան, Դիլիջանը և այլն, կոմունալ ձեռնարկությունների ցանցը շատ չնշին եր, թույլ եր զարգացմած, և այդ քաղաքները զուրկ ելին կոմունալ անտեսության ամենատարրական ճյուղերից, ինչպիսիք են բազուիքները, սպանդանագները,

ջրմուղները (Յերևանի բացառությամբ), բարեկարպությունը և այլն:

Աւստի զարմանալի չե, վոր յերկը ի խորհրդարնացման մոմենտում կոմունալ տնտեսությունը հանրապետության մեջ անձնավորվում եր մեկ ջրմուղով, 4 սպանդանոցով, 6 բաղնիքով, 2 ասենիզացիոն սարշախմբով և մոտավորապես 1500 առևտրական շենքով, վորոնք պատերազմի տարիներում անպետքացել և անխնամ վիճակի մեջ ելին ընկել: Այդ բոլոր կոմունալ ձեռնարկությունների արժեքը 3,5 միլիոն ռուբլի չեր հաշվում և թված ձեռնարկությունների ճնշող մասան, ընդհանուր արժեքի մոտավորապես $97\%_0$ -ն ընկնում եր Յերևանին և Լենինականին:

Խորհրդավին իշխանությունը վերակազմության և մեր ազգարնակչության կուլտուրական զարգացման արմատական խնդիրը դնելով, անհրաժեշտություն զգաց կոմունալ տնտեսությունն ընդլայնել և նոր ճյուղեր հիմնել, վորովիետե այդ բոլոր պլրոցենները, մանավանդ ազգարնակչության կուլտուրական վերելքի խնդիրները, ինչպես և մեր քաղաքների սանիտարական պայմանների բարելավումն անհնար եր իրակործել առանց կոմունալ տնտեսության նվազագույն-տարրական ճյուղերի առկայությանը միշտ և, խորհրդաբանացման առաջին իսկ օրերից մեր տեղերն սկսում են այդ խնդրում ակտիվություն և ինքնազործուներություն ցուցաբերել, սակայն մեր բնական հնարավորությունների կարծր շրջանակները, մանավանդ տեղական բյուջեինը, թուլլ չեն տալիս այդ նպատակին բավարար հատկացումներ անելու: Մյուս կողմից՝ մեր տեղական բյուջեի դեֆիցիտախու-

թյունը, վոր քրոնիկական բնոււթե և ստացել, բացատրվում ե իսկապես լեկամտարեր բազաների բացակայությամբ, մասնավորապես կոմունալ տնտեսության լեկամուտների բացակայությամբ։ Յեվ լեթե ՍևՀՄ շատ քաղաքներ կարողացան համեմատաբար արագ կերպով վերականգնել իրենց բյուջեները, այդ բանի բացատրությունը իսկապես պետք ե վորոնել նրանց հղոր կոմունալ ձեռնարկությունների բավական զարգացած ցանցի մեջ։ Ահա թե ինչու անհրաժեշտ ե նշել, վոր թեև ընդհանուր առումով մեղնում կոմունալ շինարարության վրա դրվող ծախսումները մինչև հնդամյակի պլանացումը շարունակ աճում ելին, սակայն իրենց ամբողջությամբ հետ ելին մնում մեր նվազագույն պահանջներից։

Կոմունալ տնտեսության հնդամյա պլանը կաղմելիս՝ պետք եր տեղերի պահանջների կապակցությամբ նախագծել կոմունալ տնտեսության այն մյուլերի ստեղծումը, վորոնց բացակայությունը սուր կերպով զգալի լե դառնում և յերեան ե գալիս ամեն որու Իսկ մյուս կողմից, վորքան ել վոր այդ պահանջները հըսկայական ելին, հարկ եր լինում կոմունալ շինարարության ընդարձակման սահմանների նկատմամբ լելնել, գլխավորապես, այն ֆինանսական իրական հնարավորություններից, վորոնց վրա նա կարող եր վստահ լինել։ Յեթե բնակչինարարությունը ֆինանսավորելու բավական քանակությամբ աղբյուրներ ունի, կոմունալ շինարարությունն այդ կողմից շտու սահմանափակ ե. նրա աղբյուրները՝ գլխավորապես գործկոթների սեփական միջոցներն են և կենք վարկերը։

Ուստի և կոմունալ շինարարության հնդամյա պլանն ընդգրկում ե միայն կոմունալ ձեռնարկություն-

ների ամենանվազագույն ճշուղերը, վորոնք մեր տեղական կենտրոններին անհրաժեշտ են:

Ընդհանուր գումարում կոմունալ շինարարության ներդրությունների տարբողջ ծավալը հնդամյակում՝ ըստ որևէ կանոնների, հետեւալ պատկերն եւ տալիս (հաղար ոռութիներով):

Շինարարության որյեկտներ	Ամբողջ ներդրություն կում	Նույն թվում			
		Ցերեան	Լինինա- կան	Դարա- քիլսա	Դիլի- չան
1. Զըմուղ	3.436,0	1.500,0	1.000,0	120,0	100,0
2. Կանալիզացիա	1.850,0	1.850,0	—	—	—
3. Մաղնդանոց	620,0	200,0	200,0	80,0	80,0
4. Բաղնիք	705,0	250,0	190,0	60,0	50,0
5. Շուկա	1.260,0	860,0	150,0	100,0	—
6. Բարեկարգություն	670,0	350,0	100,0	50,0	100,0
7. Ավտոբուսներ	310,0	250,0	60,0	—	—
8. Հրդեհաշեց ջուկա	235,0	200,0	35,0	—	—
9. Փող. սալահատ, և մայթիք	1.528,0	730,0	400,0	150,0	100,0
10. Գաղտ	200,0	200,0	—	—	—
11. Աղբակեղ վառքան	110,0	110,0	—	—	—
12. Հյուրանոց	276,0	—	—	100,0	50,0
13. Այլք	300,0	—	300,0	—	—
Ընդհանուր		11.000,0	6.000,0	2.435,0	680,0
					480,0

Այսպիսով, կոմունալ շինարարության ներդրում-

Ների ընդհանուր գումարը՝ ամբողջ Հայաստանում
 հնգամյակի ընթացքում, 11 միլիոն ռուբլի է։ Զգալի
 ծախսութիւն արվում էն ջրուղների կառուցութիւնների
 լիծով, գլխավորապես Յերևանում, Ենինականում, Վա-
 ղարշապատում, Ղարաքիլիսայում, Դիլիջանում, Գորի-
 սում։ Այլևս, նախագծվում ե կանալիզացիալի կառու-
 ցում Յերևանում, վորի իրական անհրաժեշտությունը
 հաստատապես հիմնավորված է, վորովհետի ստեղծված
 դրության սրությունը կանալիզացիալի կառուցումը
 Յերևանի առաջնակարգ և կարդինալ խնդիրն եղած-
 ում։ Այնուհետև գալիս են բաղնիքների, սպանդանոց-
 ների, շուկաների կառուցմանը վերաբերող ներդրում-
 ները, մեր քաղաքների բարեկարգության հետ կապ-
 ված ծախսները, ինչպես փողոցների սալահատակում,
 մայթերի շինություն, տնկարարություն և այլն։ Այս
 բոլոր ծախսութիւններն իրենց ամբողջությամբ նախա-
 տեսված են առավելապես սուր կարիք զգացող շրջան-
 ների համար, և նպատակ են դնում բավարարել նրանց
 կուլտուր-կենցաղական և սանիտարական կարիքները։

Ներդրութիւնների ընդհանուր գումարից Յերևանին
 բաժին ե ընկնում մինչև 55% , Ենինականին 22% ,
 իսկ մնացածը մյուս քաղաքավայրերին։ Բայց Փինան-
 սավորման ազգությների՝ նշված գումարը բաշխվում է
 հետեւալ կերպով (հազար ռուբլիներով)։

Ներդրութիւնների համբարագումարը
հնգամիակում

1. Տեղական բյուջե	1.700,0
2. Հայաստանի Կոմբանկ	1.200,0
3. Ենինական բանկ	7.500,0
4. Պետրոջե	600,0

Ընդհանուր՝ 11.000,0

Բատ տեսակարար կշռի՝ նկա վարկերը կազմում
են՝ 68, 1⁰/₀, տեղական բլուջելի միջոցները՝ 15,5⁰/₀,
կոմբանկինը՝ 10,9⁰/₀, վերջապես պետրյուջելինը՝ 55,5⁰/₀,
այսինքն տեղական բոլոր միջոցները կազմում են՝
26,4⁰/₀ և միութենականը՝ 73,6⁰/₀: Ներդրումների հան-
րագումարում միութենական միջոցների ալգախիմի մեծ
տոկոսն անհրաժեշտ է նորմալ ընդունել, վորովհետեւ
տեղական միջոցները, մանավանդ տեղական բլուջեն,
դժվար թե կարողանան ավելի տար, իրենց դեֆիցի-
տայնության պատճառով: Մյուս կողմից՝ ալգ ներդրում-
ները հետագալում հնարավորություն կտան ստեղծել
այն չեկամտաբեր բարզաները, վորոնք հետդիետե խթան
կդառնան տեղական բլուջելի դեֆիցիտայնությունը
վտարելու:

Բատ հնգամյակի առանձին տարիների՝ նշված
ներդրումների բաշխումն աճող առաջադիմությամբ և
գնում, սակայն սկզբունքով պլանումը շինարարության
որիեկտների առավելտգույն ուժեղացման խնդիրն և
դրվում, վորակեսզի նրանց կառուցումը հնգամյակի
բոլոր տարիներումը չձգձգվի, նպատակ ունենալով
ալգ ներդրումների արագ եֆֆեկտավորությունը ձեռք
բերել Դառնալով հնգամյակի հատվածին, այն և՝
28–29 թվականին, անհրաժեշտ ե տաել, վոր կոմու-
նալ շինարարության պլանի կատարումը մի փոքր շե-
պումն և տալիս: Մասնավորապես, պլանով նախադըն-
ված եր Յերեանում կանալիգացիտի կառուցումն
սկսել վորը, սակայն, չի ձեռնարկվել մի շարք տեխ-
նիկական և ֆինանսական նկատառություններով. ապա,
միքանի շրջաններում կոմունալ շինարարության զա-
նազան ճյուղերի վարկերը վորոշ չափով կարճվեցին և

ալլն, ուստի Հայաստանի Պետպլանը, ստուգիչ թվերը կազմելիս, ստիպված էղավ համապատասխան ուղղումներ մտցնել, վորպեսզի հնարավորություն ունենա ամբողջ պլանի իրադորժմանը մոտենալու և զրանով ուժեղացնելու այն ճշուդերը, վորոնք իրենց զտրգացման մեջ հետ են մնացել:

Սակայն, վորչափ ել առաջին հայացքով մեծ յերեան այդ բոլոր ներդրումները, այնուամենայնիվ կոմունալ շինարարության հնգամյա պլանը շատ կրնատ ե կառուցված:

Վերենում մենք նշեցինք, վոր մեր տեղերի շատ պահանջները, ֆինանսական նկատառումներով, պլանից դուրս մնացին: Ապա, շրջանացման և նոր գավառական ու գավառակային կենտրոններ ստեղծելու հետեւ վանքով՝ այդ պլանը ուղղումների և լրացումների կարիք ունի: Վերջապես, ըստ Ա.Ս.Ֆևէ Կառավարության հաշվետվության, Միութենական կառավարությունը՝ անրավարար ընդունելով կոմունալ շինարարության զարգացման վերցրած թափը, առաջադրեց նորից վերանայել այս հնգամյակը՝ նրա ուժեղացման և ընդլայնման տեսանկունով, յենելով տին բանից, վոր ընդհանուրապես Ա.Ս.Ֆևէ կոմունալ ձեռնարկությունների ցանցը թույլ ե: Այլևս, վերջին ժամանակներում մեր մամուլի եջերում գրվում եր նույնպես Յերեանում տրամվայ կառուցելու նախագծի մասին: Ինչպես յերեւմ եր վերևում բերված թվերից, վերջինս նույնպես նախատեսված չեր. հնգամյակի պլանով:

Բոլոր նշված նկատառումներն ստիպում են Հայաստանի Պետպլանին նորից ձեռնարկել վերակազմել կոմունալ շինարարության պլանը այն նկատառումների հիմունքով, վորոնց մասին վերևում ասվել ե:

Այնուամենալիք, սակայն, չնայելով կոմունալ շինարարության պլանի համեմատական կարծրությանը, նույնիսկ այդ նվազագույն փոփոխակի իրազուծումը հնարավորություն կտա այս հնգամյակի ընթացքում մեզնում ստեղծել Հայաստանի կոմունալ տնտեսության մի շարք խոշոր ոբյեկտներ։

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ՊԼԱՆ

Ներկա ժամանակաշրջանում, լեռը չափազանց լարված ջանքերի գնով ժողովրդական տնտեսության լրիվ վերակազմության պրոցեսն և կատարվում, շինարարությունը՝ վորակես ժողովրդական տնտեսության մի առանձին ճյուղ, հատուկ նշանակություն և ստանում։

Շինարարությանը վերաբերյալ լենթագրությունների հաջող կատարումից լիակատար չտիրով կախված և բոլոր լենթագրությունների հաջող կատարումն այս հնգամյակում։ Շինարարության ամփոփիչ պլանի հիմնական բովանդակությունը պետք է լինի՝ թնչչափով և ապահովված իր ժամանակին շինարարության այն բոլոր կուռուցումների և շնչքերի տնտեսական և տեխնիկական ճիշտ կատարումը, վորոնք նախատեսնված են ժողովրդական տնտեսության առանձին պլաններով։

Ուստի, շինարարական պլանի վերլուծության մեջ գերակշիռ տեղ պետք է գրավի վոչ թե նկատի առնված գրամական ներդրումների պարզ թվարկումը, այլ այն միջոցները, վորոնք անհրաժեշտ են նյութական աղբյուրներով այդ ծավալը կատարելու համար

(բանվորական ուժի, տեխնիկական անձնակազմի, նյութերի և ալին), և կազմակերպչական միջոցների սիստեմի, վորոնք ապահովում են դժվարությունների և «նեղ տեղերի» հաղթահարումը, վորովհետև ժողովրդական տնտեսության արդ ճյուղում արդեն միքանի տարվա ընթացքում պահանջի և առաջարկության խցումն և նկատվում. արտադրությունը շինարարության աճման շինարարական թափերի հետեւց չի հասնում։ Հակասությունն արդ պահանջների և հնարավորությունների միջև ստեղծել ե ալստեղ յուրատեսակ «մկրատ» և այդ «մկրատի» բացվածքն այնպիսի ընույթ՝ ստացավ, վոր սպառնաց շինարարությունը քայլայել շատ ճուղերում։ Անա թե ինչու հնգամյակի ընթացքում այդ «Եփնարարությունը պետք է վոչ միայն բնի, այլև միածամանակ ինեն ել պետք է վերափնտիր, ինչպես նշվում և ԽՍՀՄ Պետպլանում։

Շինարարության ամփոփիչ պլանի կազմումը խոր դժվարությունների հետ և կապված, վորովհետև անցյալում տվյալների և փորձի կուտակում չինելը մշակման ճշտության և մանրամասնության աստիճանը սահմանափակում եր։

Ալստեղ կարիք չկա շինարարության Փինանսավորման չափերի մասին խոսել, վորչափով վոր նա ապահովված ե տմեն մի ճուղի պլանի մեջ։

Այս տեսակետից կարող ե թվալ, վոր շինարարության ամփոփիչ պլանը և շինամթերքների հաշվեկշիռը իրոք միայն մի վորոշ չափի «ամփոփումն» են, ինչ վոր պատրաստի գումարելիների հանրագումար։ Մակայն տվյալ դեպքում բանն այդպես չե. այդ ամփոփումը պետք ե ժողովրդական տնտեսության բոլոր պլանների համագրությունը—սինտեզը լինի։

Ինչ վերսթերում և շինամթերքների հաշվեկշիռը —
բալանսը և բանուժի պահանջը հայտնաբերելուն,
թվում ե, թե հնարավոր կլիներ ճուղերի պատրաստի
պլաններից հանուններ անելի

Սակայն, դժբախտաբար մեր ճուղալին պլանները
բավարար ուշադրություն չեն դարձել այդ բանի
վրա. շատ պլաններում նշված տվյալները չեն լեզել
ուստի և այդ աշխատանքը հաշվեկշռալին ուղիղ մե-
տոդով անհնարին եր կատարելի Այդ պատճառով շի-
նարարության ամփոփիչ պլանը կազմելիս՝ հնաժըալոր
համարվեց պլանը կազմել եքսպերտալին գնահատում-
ների և խոշորացրած չափանիշների հիմունքով: Վերջին
մետոդը կայանում և նրանում, վոր պետք եր լինում
շինարարական աշխատանքների մի այնպիսի վորոշ
խոշորության միավոր ընտրել վոր բնութագրեր շի-
նարարության տվյալ տեսակը՝ վորպես չափանիշ, և
այս մի շաբաթ հաշվալին և նախահաշվալին տվյալ-
ների ստուգման հիման վրա վորոշել բանվորական
ուժի և շինամթերքների միջին ծախսի թվերն այդ
միավորի համար:

Ճիշտ ե, այդ լիդանակի մեջ շատ բան պայմա-
նական ե և բարդ, այնուամենայնիվ դրությունից
դուրս դալու լիլք ե տալիս:

Հիմական տվյալները՝ անտեսության առանձին
ճուղերի կապիտալ ներդրումների չափերի մասին,
վերցված ևն համապատասխան պլաններից, բայց ար-
դեն պլանալին լինթադրությունները բաշխելիս՝ այդ
առանձին պլանների մեջ ուղղումներ են մտել՝ տնտե-
սության առանձին ճուղերի ծավալման թափերն ու-
ժեղացնելու ուղղությամբ: Այս, հետանկարային պլա-
նը լինթարկվեց հետեղորական քննության և փոփո-
խության ԱՄֆիօչ, ԽՍՀՄ Պետպլաններում, ԽՍՀՄ

ԺԿԽ, XVII կուսկոնքերենցիալում և, վերջապես, ԽՍՀՄ Խորհուրդների Վ-րդ համագումարում և մեր կազմած պլաններն ել փոփոխության ընթարկվեցին, վորովհետև, ինչպես հայտնի է, Միութենական կառավարությունը հաստատեց ոպտիմալ փոփոխակը: Ուստի, ներկա ամփոփիչ պլանը պետք է համարել վորպես նվազագույն փոփոխակ, ուր պետք է ուղղութեար մըտցվեն ճուղային պլանների փոփոխությունների համապատասխան:

Եկնարարության ամփոփիչ պլանը՝ այս նվազագույն փոփոխակում, Հայաստանի Պետպլանը կազմել է հետեւյալ թվերով (միլիոն ռուբլիներով):

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԸ	ԲՈՒՋԵ ԴՐԱՄՆԵՐԸ	ՆԵՐ ԴՐԱՄՆԵՐԸ	ՎԵՐ ԴՐԱՄՆԵՐԸ	ՀԵՄ ԴՐԱՄՆԵՐԸ %
1. Արդյունաբերություն	38,9			20,8
2. Եկամուտի կազմակերպություն	11,4			6,2
3. Գյուղատնտեսություն	12,4			6,6
4. Զբանահասություն	28,1			15,1
5. Փոխադր. շինարարություն	22,4			11,9
6. Բնակ. շինարարություն	40,0			21,5
7. Կոմունալ. շինարարություն	6,5			3,5
8. Առևտության ասաց. շինար.	9,1			4,8
9. Կուլտուր. կրթական	8,8			4,7
10. Հիգիենիկանոց. և կուրորտային	5,4			2,9
11. Վարչական	2,7			1,4
12. Կապ	1,2			0,6
Ընդամենը	186,9			100,0

(Առևտության պահեստային և սառցարանային շինա-

բարութիան խմբի մեջ մենք մտցըինք նաև գլուղա-
տնտեսական կոռուպերացիալին և խորհութեառութլուն-
ներին վերաբերլավ համանման ներդրումները, ուստի
և ալդ թիվը ապրանքաշրջանառութլան պլանի տվյալ-
ներից մի փոքր բարձր ե):

Մի անգամ ևս կրկնելով այս թվերի ամբողջ
պայմանականութլունն ու մոտավորականութլունը,
նշենք միայն, զոր այդ գումարների մեջ չեն մտել
գլուղական շինարարութլան ծախսումները, վորովիե-
տես պլանը կազմելու մոմենտին անհնարին եր վորոշել
այս: Ինչ չափով զոր այս ամբողջ պլանն ընդհանրա-
պես մոտավոր ե և արմատական ուղղումների պետք
ունի, անհրաժեշտ ե հաշվի առնել նաև շինարարու-
թլան վերջին տեսակը: Այսպիսով, այս պլանի նշա-
նառումն ինքըստինքյան ակներեւ ե:

Այս աղյուսակից նկատվում է, վար ընդհանուր
առումով ժողովրդական տնտեսութլան ըոլոր ճյուղերի
զուտ շինարարութլան ծավալը հնգամլակի ընթաց-
քում 187 միլիոն ոստքի է: տնտեսութլան առանձին
ճյուղերում ալդ աշխատանքները գումարվում են:
Գլուղատնտեսութլան շինարարութլան մեջ հաշվի լին
առնվում գլուղատնտեսութլան ինդուստրացման կա-
ռուցումները, այստեղ նկատի լի առնվում պահնըի գոր-
ծարանների, չորանոցների, գրենաժի և այլ դործա-
րանների կառուցում և այլն: Շինարարութլան այս
տեսակը ամբողջ շինարարութլան հանրագումարի
6,6% ե կազմում:

Ջրային տնտեսութլան մեջ, ջրաբաշխութլան աճ-
ման համաձայն շինարարական բնույթի ծախսումները
15,1% են կազմում (արագարները—դոկերը, Փ. Սար-

կարաքատ, մանր աշխատանքները և ալլն): Արդյունաբերության ծախսութենքը կատարվում են (առանց սարքավորման) 20,8%, ելեկտրականությանը (նույնպիս առանց սարքավորման)՝ 6,2% և ալլն:

Ժողովրդական տնտեսության կառուցվածի և նրա զարգացման պլանի համար բնորոշ են մեծ քաֆինների հավաքական հանրագումարները: Արդյունաբերություն—մեջը դնելով ելեկտրիֆիկացիան, զուգատնտեսությունը՝ ջրաբաշխության հետ միասին, փոխադրությունը և կապը, առեւտրական և սառցարանային շինարարությունը, քաղաքացիական—բնակարանային, կոմունալ և վարչական շինարարություն և, վերջապես, կուլտուրական և արդ խմբում կրթական և առողջապահական շինարարությունը: Այս բաժանումով ստանում ենք հետևյալ փոխհարաբերությունը (%/⁶/₀-ով):

1. Արդյունաբերություն	27,0
2. Գյուղանտեսություն	21,7
3. Փոխադրություն և կապ	12,5
4. Առեւտրա-սառցարանային	4,8
5. Քաղաքացիական	26,4
6. Սոց.-կուլտուրական	7,6

Ընդամենը՝ 100,0

Պլանի նկարագրված տարրերը ալդախիսի ընդհանություղ վերլուծության, առաջին փորձն են ներկայացնում, այն ել չափազանց տնկտտար ավլայներով, բայց ընդհանուր առումով բավարկան պարզ ցուցը են տալիս ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի շինարարության ուղղությունը:

Ինչպես ասկած և վերեսում, զուտ շինարարու-

թւան ներդրումների այդ թվերի հիման վրա դուրս ե
բերված բանուժի և հիմնական շինամթերքի պահան-
ջը: Հնարավորություն չունենալով այստեղ այդ ցու-
ցանիշների մանրամասն աղյուսակը տալու, կը երենք
միան մի քանի ցուցանիշներ հնդամյակի տուաջին
և վերջին տարիների համար:

Ենարարական բանվորների ընդհանուր պա-
հանջը բոլոր շինարարության համար այդ տարինե-
րում պատկերացվում ե իր ամբողջությամբ հետևյալ
տվյալներով (քանակագիս):

1928/29 թ. 1932/33 թ.

1. Սետգործ-բանվորներ և նողափորներ	15.540	22.204
2. Վորմնաղիբներ և քարտաշ.	2.700	3.465
3. Խոռագներ	680	730
4. Ատաղձաղործներ	410	480
5. Սվաղողներ	510	582
6. Վորմնաղարդիշներ	400	450
7. Վառարանագործներ	80	140
8. Նողափորներ և գալլիկոնա- վորներ	280	350
9. Աւրիշ փեշտքարներ	320	410

Վերեւում բերված թվերը հանգած են խոշորացրած
չափանիշների մեջովով, ուստի և մի փոքր պայմա-
նական են և մոտավոր: Այսպես թե այսպես, նրանք
բանուժի պահանջի մերձագոր պատկերն են տալիս՝
ըստ արհեստների: Սակայն, ի հետևում ստացված
մեծությունների համեմատության՝ պատրաստի բան-
ուժի քանակի և նրանց աճման հաջվասման հետ,
հնդամյակի ընթացքում շատ արհեստներում չափա-

ղանց մեծ դեֆիցիտ ե ստացվում, 1932/33 թվին հասնելով պահանջի մոտավորապես $30^{\circ}/\circ$ -ին (միջին հաշվով): Այդ դեֆիցիտն առանձնապես սուր կերպով կարտահայտվի վորակալ բանութի նկատմամաք և զուր կլինի հուլս դնել, թե ալդ դեֆիցիտը կարելի չե ծածկել Միությունից կամ ԱԽՍՖՀ, վորովհետև այդ խնդիրն այնտեղ ել սուր ե: Այդ պայմաններում՝ ընականաբար, անհրաժեշտություն ե ծագում դիմել բանվոր-շինտրատրների բավական խոշոր մասսանների մասնագիտական տրագ պատրաստության մեթոդների լայն զարգացման, մանավանդ վոր այդ նպատակի համար միջոցներ կան՝ աշխատավարձի հավելման չնդանակով: Այստեղ պետք ե լայն աշխատանք տանել աշխատանքի ոգտագործումը բարելավելու, բանվորական ժամանակը խատցնելու, աշխատանքի արտադրականությունը բարձրացնելու, անընդհատ բանվորական շաբաթը մտցնելու և այլն: Այս աշխատանքը պետք ե տարվի Հուստողկոմատի գծով շինուաների սիստեմով և միաժամանակ Աշխատողկոմատի որդաններով՝ Աշխատական տիբնստիտուտի մեթոդներով:

Հնգամյածակում նույնպես սուր կերպով դրված ե հրամանատարական կադրի խնդիրը (ինժեներների և տեխնիկների խնդիրը), վորտեղ խզումն ել՝ ավելի կըրկնապատկվում ե: Ինժեներների և տեխնիկների պահանջի հաշվարկումները՝ նշված ծավածի շինուարության մեջ, ցուց տվին, թե պետք ե ավելի քան կըրկնապատկել նրանց գոլությունն ունեցող կադրը: Ցեղետի տիբնիկների պակասությունը մասամբ լրացնում են պրակտիկանատները (տասնապետները) և ուստանողները, սակայն և այնպես ինժեներական ուժերի հստանքը չափազանց տնբավարար ե:

Արդ բանի մասին մանրամասնաբար ցուց և
արվում սոցիալ-կուլտուրական շինարարության պլա-
նում, ուստի գրա վրա ալստեղ մենք կանգ չենք առ-
նի, բայց կնշենք միայն, վոր ընդհանրապես կաղըերի
խնդիրը՝ թե ամբողջ հնգամյա պլանում, թե շինա-
րարության մեջ, չափազանց սուր և գրված:

Ինչ վերաբերում և շինարարության հիմնական
և գլխավոր նկութերի պահանջին, նրանք ել նույնպես
դուրս են բերված խոշորացված չափանիշների մեթո-
դով և հնգամյակի առաջին և վերջին տարիներում
ներկայանում են հետեւալ ձևով (քանակապես).

Չափանիք 1928/29 թ. 1932/33 թ.

1. Ժեստքար	խոր. մետր.	468.700	912.000
2. Հատաքար			
(12×8×6)	»	105.900	164.000
3. » » (8×8×8)	»	235.800	393.000
4. Կիր	տոնն	29.920	49.100
5. Ավաղ	խոր. մետր.	278.200	495.000
6. Ցեմենտ	տակառ	114.000	197.300
7. Կոր փայտ	խոր. մետր.	48.400	73.600
8. Սղոցված	»	48.300	79.100
9. Ներկեր և ձի-			
թաղեղ (ոլիֆ)	տոնն	696	1.170
10. Ցերկաթ (ամեն			
տեսակի)	»	97.700	162.000

Ընդհանրապես շինամթերքների խնդիրը ներկա-
լումս բացարիկ սրություն և ստանում, վոր իր հեր-
թին ազդում և շինարարության թանգացման վրա:
Բավական և ասել, վոր մեղնում նույնիսկ քարի դե-
ֆիցիտի դեպքեր են լիդել: Վորքան և պայմանական

լինելին վերևում դրված հաշիվները, այնուամենալիք այս թվերը խոսում են շինամթերքների պահանջի աճման ձասին:

Ուստի, հիմնական շինամթերքների արտադրության լայնացման խնդիրը՝ թե շինարարական ծրագիրն ապահովելու միջոցների և թե շիննարարությունն աժանացնելու սիստեմում, ամենատակտուալ խնդիրներից մեկն և հանդիսանում: Այս տեսակետից բացառիկ նշանակություն պետք է տալ Արթիկի տուֆին-գորի արժանիքների վրա կանգ չենք առնի, վարովնետև նրանք արդեն հանրածանոթ են: Վորպես շինամթերք՝ պատերի, միջնորմների, ծածկերի, աղյուսին փոխարինելու համար և այլն, տուֆը պետք է ամենալայն գործադրությունը գտնի: ԱԽՖՍՀ Պետպլանի ավելաներից լեռնում ե, վոր Արթիկտուֆի գործադրությունը $15\text{-}20^{\circ}/_0$ -ով պետք է իջեցնի ԱԽՖՍՀ շինարարական բնակարանների արթեքը:

Այլևս, շինարարության մեջ պետք է գործադրություն գանի նաև մեր պեմզան: Դժվարին կացություն և ստեղծվում ձեզունանլութերի (տանիքի շինամթերք) վերաբերությամբ նրանց դեֆիցիտայնության հետեւավանդով, և՝ հետևաբար, քանի վոր Միությունն ամբողջությամբ այդ սրությունն և ապրում, անհրաժեշտ է հնարատվորության սահմաններում նրանց կրճատել և տնտեսել շինարարության մեջ և փոխարինել ուրիշ նյութերով:

Ինչ վերաբերում է կրին և ցեմենտին, պետք է ասել, վոր նրանց պակասությունն այժմ իսկ զգացվում է: Ցեվ այս ուղղությամբ արդունաբերական պլանում հարգածալին խնդիր է դրվում՝ մեծացնել ցնմենտի արտադրությունը և ցնմենտի մի խոշոր գործարանի կառուցումը՝ ինչպես նախատեսնված և կառուցել Պավալվում, հենց դրանով և բացարկվում: Ապա, բացի տեղական արդյունաբերությունից, շինամթերքների արտադրության գործում ոգնության

պետք և գա նաև տհայնազործական կոռավերացիան։
Խսկ ընդհանրապես անհրաժեշտ և ձեռք տունել բոլոր
միջոցները, կազմակերպչորեն ապահովելու շինա-
մթերքների կանոնավոր և անընդհատ մատուկարա-
բումը։ Այս չափազանց զժվարին և բարդ խնդիրը
պետք և ամբողջ հնդամակի ուշադրության կենտրոնը
դասնա և լուծվի ինչ ել վոր լինի։

Եինարարության խնդրի հետ կապված և նույնական
շինարարության արժեքն իջեցնելու վերաբերյալ տըն-
տեսական ամենակարենը դիրեկտիվի իրացման խըն-
դիրը։

Այդ պրոբլեմում, ինչպես հիմնական հանգույցում,
հյուսվում են շինարարական պլանի բոլոր խնդիր-
ները։

Նախագծման ռացիոնալացումն այսուել մեծ նշա-
նակություն ունի, վորովհետեւ լավ նխագծումը շինա-
րարության ամենաշատ եփեկտավորության զրավա-
կանն և հանդիսանում։ Այս ուղղությամբ պետք և
լայնորեն զրվի փորձնական գործը, փորձագիտու-
թյունը—եքսպերտիզմն և հետազննությունը, ինչպես
և շինարարական վարձակալական որգանների լայն
կազմակերպումն ու խոշորացումը։ Նախագծման ռա-
ցիոնալացման, շինարարական պրոցեսների պլանավիճն,
ֆինանսական և կազմակերպչական կողմի կանոնա-
վորման, աշխատանքի արտադրության բարձրացման,
նյութերի արտադրության մեծացման վերաբերյալ բո-
լոր աշխատանքների հանրագումարը, ինչպես և մի
շարք ուրիշ միջոցներ—այս բոլորը գումարած՝ պետք
և ապահովեն շինարարական խնդեքսի իջնցումը։ Այս
բարդ պրոբլեմում կենտրոնացած են շինարարության
բոլոր զժվարությունները։ Մակարն ըրոլորովին ակնե-
րկ և, թէ շինարարության բոլոր տեսակների վերա-

բերությամբ իջեցման միակերպ չափեր չի կարելի գործադրել: Միության մեջ, շինարարության արժեքի իջեցումը՝ ըստ նվազագույն փոփոխակի, որինակ՝ արդյունաբերության համար նկատի լի առնված՝ 40% , իսկ ոպտիմալ փոփոխակով՝ 47% , բնակչինարարության՝ 38 և 43% (համապատասխանորեն) և այլն: Այս բոլոր խնդիրները հնարավոր ե իրագործել կոլեկտիվ — մեծ աշխատանքով, վորին պետք ե մասնակցեն արհեազմակերպությունները և արտադրողական խորհրդակցությունները:

Սրանով վերջացնելով ամփոփիչ պլանի տարրերի համառոտ նկարագրությունը, մի անգամ ել նշում ենք, թե բոլոր թվական հաշիվները մոտավոր են:

Սակայն նկարագրված նյութերը բնորոշում են շինարարության տնտեսական պրոցեսների միայն մոտավոր տենդենցները:

Ասվածների հանրագումարը բերելով, պետք ե ասենք, վոր շինարարության առաջադրված խնդիրը բացառապես դժվար խնդիր ե և պետք ե իրագործվի միայն այն դեպքում, յերբ մի շարք տեխնիկական-կազմակերպչական բնույթ ունեցող միջոցներ պլանաշափորեն կրանք կմտնեն: Այդ ե ճանապարհը, Յեզ շինտրարության պլանը կարող ե իրականանալ, «յեթե կստեղծվի նոր տիպի շինարար, վոր իր ուժի և պատասխանատվության գիտակցությամբ հանձն առնի խիզախաբար հաջողությամբ իրականացնել հաճախ համարձակ և հանդուգն կառուցումներ և յեթե ստեղծադործ նախաձեռնությունը և համարձակությունը շաղկապված կլինեն ինժեներ-շինարարի գիտության և խանդավառության հետո»:

(ԽՍՀՄ ճամիա պլան, II հատոր, մասն I, էջ 449):

ԳԱԱ Հիմնարար գիտ. գրադ.



FL0039616

(104)

A 1
4369

Գինը 10 կոպ. Մ. ($1\frac{1}{2}$ լ.)



Шакарян

ПЯТИЛЕТНИЙ ПЛАН НАРОДН. ХОЗ. СОВЕТСК. АРМЕНИИ

СТРОИТЕЛЬСТВО

Госиздат ССР Армении
Эривань, 1929 г.